



ԽՈՐԱՅՐԵՔ ԶԵՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ

ՖՈՏՈԷՖԵԿՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ֆոտոէֆեկտի բացատրությունը հնարավորություն է ավելց ստեղծելու լուսային տեխնոլոգիաներ իրականության տարբեր բնագավառներում: Ներկայացնենք մի քանի կիրառություններ:

Ֆոտոէֆեկտի միջոցով «համր» կինոն դարձավ խոսող, նրա շնորհիվ հնարավոր դարձավ պատկերների հաղորդումը հեռուստատեսությամբ: Ֆոտոէֆեկտով աշխարհը սարքերը ժամանակին միացնում և անջատում են փարոսները, փողոցների լուսավորությունը, խաչմերուկների լուսացոյցները: Ֆոտոէֆեկտի հիման վրա գործող սարքերի ամենակարևոր մասը ֆոտոդարձն է: Ֆոտոդարձը ֆոտոռեզիլի կարևոր բաղադրիչն է: Ֆոտոդարձի վրա լույս ընկնելիս շղթայում առաջանում է հոսանք, որը միացնում կամ անջատում է ռելեն: Նման մի ռելե է օգտագործվում մեքոդայում տեղակայված ավտոմատում, որը մարդու դիմաց չի փակում արգելափակոցը, եթե նախորդ ավտոմատի մեջ ժելոն է գցված: